

Հեպատիտ B-ի պատվաստանյութ Ի՞նչ է անհրաժեշտ ձեզ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական կյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis կայքը

1 Ինչո՞ւ պատվաստվել:

Հեպատիտ B-ն յարդի լուրջ հիվանդություն է: Դրա պատճառը հեպատիտ B վիրուսն է: Հեպատիտ B-ն կարող է մի քանի շաբաթ տևող թեթև հիվանդություն առաջացնել կամ բերել լուրջ, ողջ կյանքը տևող հիվանդության:

Հեպատիտ B-ի վարակը կարող է սուր կամ քրոնիկ լինել: **Սուր հեպատիտ B վիրուսային վարակը** կարճատև հիվանդություն է, որն առաջանում է մարդու մոտ՝ հեպատիտ B վիրուսի ազդեցությանը ենթարկվելուց հետո 6 ամսվա ընթացքում: Դա կարող է հանգեցնել՝

- տենդի, թուլության, ախորժակի կորստի, սրտխառնոցի և/կամ փսխման
- դեղնաձուլության (մաշկի կամ չաքերի դեղին գույն, մուգ գույնի մեզ, կավագույն կղանք):
- սկաններում, հոդերում և ստամոքսում ցավի

Քրոնիկ հեպատիտ B վիրուսային վարակը երկարատև հիվանդություն է, որն ի հայտ է գալիս, երբ հեպատիտ B-ի վիրուսը մնում է մարդու մարմնի մեջ: Մարդկանց մեծ մասը, ում մոտ սկսում է զարգանալ քրոնիկ հեպատիտ B, ախտանիշներ չի ունենում, բայց հիվանդությունը միևնույն է՝ շատ լուրջ է և կարող է հանգեցնել՝

- յարդի վնասման (ցիրոզի)
- յարդի քաղցկեղի
- մահվան

Քրոնիկ վարակված մարդիկ կարող են հեպատիտ B-ի վիրուսը փոխանցել այլ անձանց, նույնիսկ եթե նրանք իրենց հիվանդ չեն զգում կամ հիվանդ տեսք չեն ունենում: Մինչև 1.4 միլիոն մարդ Միացյալ Նահանգներում կարող է քրոնիկ հեպատիտ B-ի վարակ ունենալ: Հեպատիտ B ստացած մանուկների մոտավորապես 90% դառնում է քրոնիկ վարակված, և 4 վարակվածներից 1-ը մահանում է:

Հեպատիտ B-ն տարածվում է, երբ հեպատիտ B-ի վիրուսով վարակված արյունը, սերմը կամ մարմնի այլ հեղուկներ մտնում են չվարակված մարդու մարմնի մեջ: Մարդիկ վիրուսով կարող են վարակվել հետևյալ եղանակներով՝

- Ծնունդ (երեխան, ում մայրը վարակված է, կարող է վարակվել ծնվելու ժամանակ կամ դրանից հետո)
- Աձեյիների կամ ատամի խոզանակների նման իրեր համատեղ օգտագործելը վարակված մարդկանց հետ
- Վարակված անձի արյան կամ բաց վերքերի հետ կոնտակտը
- Վարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություն ունենալը
- Ասեղներ, ներարկիչներ կամ թմրանյութեր ներարկելու այլ սարքեր համատեղ օգտագործելը
- Ասեղի կամ այլ սուր գործիքների ծակոցից դուրս եկած արյան հետ շփման մեջ լինելը

Ամեն տարի մոտ 2,000 մարդ Միացյալ Նահանգներում մահանում է հեպատիտ B-ի հետ կապակցված յարդի հիվանդություններից:

Հեպատիտ B-ի պատվաստանյութը կարող է կանխել հեպատիտ B-ն և նրա հետևանքները՝ ներառյալ յարդի քաղցկեղը և ցիրոզը:

2 Հեպատիտ B-ի պատվաստանյութը

Հեպատիտ B-ի պատվաստանյութը պատրաստվում է հեպատիտ B-ի վիրուսի մասերից: Այն չի կարող հեպատիտ B-ի վարակ առաջացնել: Պատվաստանյութը սովորաբար տրվում է 2, 3 կամ 4 ներարկումների միջոցով 1-ից 6 ամսվա ընթացքում:

Նորածինները պետք է հեպատիտ B-ի իրենց առաջին դեղաչափը ստանան ծնվելիս, և շարքը սովորաբար պարտվում է 6 ամսականում:

Բոլոր **երեխաները և դեռահասները**, ովքեր 19 տարեկանից փոքր են և դեռևս պատվաստանյութ չեն ստացել, նույնպես պետք է պատվաստվեն:

Հեպատիտ B-ի պատվաստանյութը խորհուրդ է տրվում չպատվաստված **մեծահասակներին**, ովքեր հեպատիտ B-ի վիրուսային վարակ ստանալու ռիսկի տակ են՝ ներառյալ

- Մարդիկ, ում սեռական զուգընկերները հեպատիտ B ունեն
- Սեռապես ակտիվ անձնավորությունները, որոնք երկարատև մոնոգամ հարաբերություններ չունեն
- Անձիկը, ովքեր սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների պատճառով դիմել են ստուգում կամ բուժում ստանալու համար
- Տղամարդիկ, ովքեր սեռական կոնտակտներ ունեն այլ տղամարդկանց հետ
- Մարդիկ, ովքեր այլոց հետ համատեղ օգտագործում են ասեղներ, ներարկիչներ կամ թմրանյութեր ներարկելու այլ սարքեր
- Մարդիկ, ովքեր տնային պայմաններում շփվում են հեպատիտ B-ի վիրուսով վարակված այլ անձի հետ
- Առողջապահության և հանրային անվտանգության աշխատակիցները, ովքեր արյան կամ մարմնի հեղուկների ազդեցության տակ գտնվելու ռիսկի տակ են
- Չարգացման թերություններ ունեցողների համար նախատեսված հաստատությունների բնակիչները և աշխատակիցները
- Ուղղիչ հաստատություններում գտնվող անձիկը
- Սեռական բռնության կամ ոտնձգության զոհ դարձած անձիկը
- Ճանապարհորդները, ովքեր ուղևորվում են հեպատիտ B-ի մեծ տարածում ունեցող շրջաններ
- Կարդի քրոնիկ հիվանդություն, երիկամների հիվանդություն, ՄԻԱՎ վարակ կամ շաքարախտ ունեցող մարդիկ
- Որևէ անձ, ով ցանկանում է հեպատիտ B-ից պաշտպանված լինել

Հեպատիտ B-ի պատվաստանյութի հետ միաժամանակ այլ պատվաստանյութեր ստանալու ռիսկերը հայտնի չեն:



3

Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

- Պատվաստանյութ ներարկող անձին տեղյակ պահեք՝
- **Եթե պատվաստանյութ ստացող անձը սուր և կյանքին սպառնացող ալերգիաներ ունի:**
Ձեզ խորհուրդ չի տրվում պատվաստվել, եթե դուք երբևէ հեպատիտ B-ի պատվաստանյութ ստանալուց հետո ունեցել եք կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիա կամ այդ պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ սուր ալերգիկ ռեակցիա եք ունեցել: Հարցրեք ձեր բժշկին, եթե ցանկանում եք պատվաստանյութի բաղադրիչների մասին տեղեկություններ ստանալ:
 - **Եթե պատվաստանյութ ստացող անձն իրեն վատ է զգում:**
Եթե թեթև հիվանդություն ունեք, ինչպես օրինակ՝ մրսաձուլությունը, դուր, հավանաբար, կարող եք այսօր պատվաստում ստանալ: Եթե միջին աստիճանի կամ ծանր հիվանդություն ունեք, դուր, հավանաբար, պետք է սպասեք մինչև ապաքինվելը: Ձեր բժիշկը կարող է ձեզ խորհուրդներ տալ:

4

Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների դիսկերը

Ցանկացած դեղամիջոցի դեպքում՝ ներառյալ պատվաստանյութը, հնարավոր են կողմնակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են արտահայտված լինում և անցնում են ինքնաբերաբար, սակայն հնարավոր են նաև լուրջ ռեակցիաներ:

Հեպատիտ B-ի պատվաստանյութ ստացող մարդկանց մեծ մասը դրա հետ կապված որևէ խնդիր չի ունենում:

Փոքր խնդիրները, որոնք հետևում են հեպատիտ B-ի պատվաստանյութ ստանալուն, ներառում են՝

- ցավի զգացողություն ներարկման տեղում
- 37.7°C (99.9°F) կամ ավելի բարձր ջերմություն

Եթե այս խնդիրներն ի հայտ են գալիս, ապա դրանք սովորաբար առաջանում են ներարկումից անմիջապես հետո և տևում են 1 կամ 2 օր:

Ձեր բժիշկը ձեզ ավելին կարող է ասել այդ ռեակցիաների մասին:

Այլ խնդիրներ, որոնք կարող են առաջանալ պատվաստանյութ ստանալուց հետո՝

- Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժօգործողություններից հետո, ներառյալ պատվաստումը: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք թեթև գլխապտույտ եք զգում, կամ տեսողության փոփոխություն, կամ ականջներում զնգոց եք զգում:
- Որոշ մարդկանց մոտ թևի ցավն ավելի սուր և երկարատև է լինում, քան ներարկումներին հետևող սովորական ցավի զգացողությունը: Սա շատ հազվադեպ է լինում:
- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ալերգիկ ռեակցիա: Պատվաստանյութից առաջ եկած նման ռեակցիաները շատ հազվադեպ են՝ միլիոնավոր դեղաչափեր տալուց մոտավորապես 1 դեպք, և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես և ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ հանդիսանա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք՝ www.cdc.gov/vaccinesafety/

5

Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

- Ի՞նչ պետք է ես փնտրեմ:**
- Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ սուր ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:
- Սուր ալերգիկ ռեակցիայի** նշանները կարող են ներառել՝ ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ և թուլություն: Դրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:
- Ի՞նչ պետք է ես անեմ:**
- Եթե դուք կարծում եք, որ դա **սուր ալերգիկ ռեակցիա** է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ զնացեք մոտակա հիվանդանոց: Հակառակ դեպքում, զանգահարեք ձեր կլինիկա:
- Այնուհետև, ռեակցիայի մասին պետք է հայտնել Vaccine Adverse Event Reporting System (VAERS) (Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին): Այդ տեղեկատվությունը պետք է գրանցի ձեր բժիշկը, կամ դա դուք կարող եք անել ինքներդ [VAERS](http://www.vaers.hhs.gov) վեբ կայքի միջոցով՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարելով 1-800-822-7967 հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

6

Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից վնասվածք ստացած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով 1-800-338-2382 կամ այցելելով VICP-ի վեբ կայքը՝ www.hrsa.gov/vaccinecompensation: Փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար կա ժամանակային սահմանափակում:

7

Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր առողջապահական խնամք ապահովողին: Նա կարող է ձեզ պատվաստանյութի փաթեթի ներդիրը տալ կամ առաջարկել այլ աղբյուրներ՝ տեղեկություններ ստանալու համար:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ) հետ՝
 - Չանգահարեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) կամ
 - այցելեք CDC-ի վեբ կայքը՝ www.cdc.gov/hpv

DCH-0450A
AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.

Vaccine Information Statement
Hepatitis B Vaccine
Armenian



Office use only

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: